Ռափայել Պատկանյան

Հայ վիշտը

Գիտեմ, խեղճ հային չեն տալ Հայաստան,
Մեզ ազգ կազմելու ամենքն են խափան,
Նախանձ, քեն ու ահ տիրել է հոգին
Դեպի հայերուս շատ ու շատ ազգին:

Թե թուր վերցնեինք՝ մեզ պիտ մորթեին,
Ոչ ոք պիտ ելներ պաշտպան խեղճ հային .
Երբոր լուռ կեցանք մենք խոհեմաբար,
Ասին . «Մեռել եք հոգեպես իսպառ»:

Ի՞նչ անենք ուրեմն, ինչպե՞ս փրրկրվինք,
Մեզ հալածողեն մենք որտե՞ղ փախչինք,
Հայության անվան խարանած կրնիք,
Հայի ճակատին կոխել են մարդիկ:

Վեց հարյուր տարի մենք կիսակենդան՝
Կրսողանք տրորած ճրճուի նման,
Փոխան շիջելու նախանձը մարդոց՝
Սաստակացավ, ավա՛ղ, զերդ հրդեհ ու բոց:

Կուզեն որ հայքրս մեր սուրբ հավատքեն
Հրաժարվինք, ինչպես մահացու մեղքեն,
Մեր լեզուն, մեր ծեսք՝ նրշանք ազգության,

Երբեք չրհիշվին ի մեջ մարդկության:

Կրրնա՞մ ուրանալ ես իմ պապերուս,
«Մորդ ատե՛» խրատել հարազատ որդուս,
Իմ ձեռքով պրղծել իմ սուրբ ավազան,
Ազգուրացն, ասե՛ք, չէ՞ վայրի գազան:

Ինչպե՞ս կրկրրնամ ես տալ մոռացման
Քո սուրբ հիշատակն, Մամիկոն Վարդան:
Ո՞ր ազգի պատմիչք չորս-հինգ հատ ցուցին
Նրման մեր անմահ Ղևոնդ Երեցին:

Չէ՛, անհրնար է ազգեն հրաժարվել,
Ինչպես որ միսը ոսկորեն բաժնել .
Սինլրքոր կրմնամ, ըստոր ու ատած,
Բայց ես չեմ լինիլ երբեք ազգուրաց: